

ՎԱԶՄԳԱՆ
ՎԱՐԳԱՆՅԱՆ



Ի

այգերգ

ապ:

ՎԱՐՎԱՐԱՆ
ՎԱՐՄԱՆԱՅԻՆ



Սպարդ

Թոյ Լաւոր
Սեփ Ին Յաւ-Կրե
Ե թ 202 Է Կ
ԳՄԻ, ԷԿԻԻ Ժաւ-
ԿրեԿր

Հարի Է Կրե
8/ VII 8/6

«Հայաստան» հրատարակչություն
Ե Ր Ե Վ Ա Ն 1 9 6 7

Այս ժողովածուի մեծ մասը քնարական գործեր են,
որոնց առանցքը ժամանակակից մարդու ներաշխարհն է՝
անձնական ու հասարակական ապրումների զուգորդմամբ:

ВАЧАГАН ЛЕВОНОВИЧ
ВАРТАНЯН
ПРЕДУТРЕННЯЯ ПЕСНЯ

(Стихи и поэмы)

Издательство «Айастан»

Ереван, 1967

7-4-3

* * *

Քայլում՝ ցնծում եմ, կանգնում՝ ցնծում եմ,
Ի՞նչ է պատահել աչսօր ինձ հետ,
Վերում արտույտն է, իսկ ես ցածում եմ,
Նա թո՛ւ-վո՛ւի, ես՝ լուրջ պոեա:

Արտույտի նման ես էլ երգում եմ,
Ձեմ կարող չերգել, չճովողել,
Մեկ հողի վրա, մեկ երկնքում եմ,
Հարբածի պես եմ, ե՛րբ եմ խմել:

Այդպես լինում է, երբ որ բացվում են
Կանաչի սիրած աչքեր վրաս,
Ես երգի գինով հարբում, հորդում եմ,
Ձի թվում ոչ մի բարձունք անհաս:

Այդպես լինում է, երբ ականջում իմ
Արվեստի գործ է հնչում վսեմ,

Իմ ողջ էությամբ այրվում, տենչում եմ,
Որ ես էլ այդպես խորունկ երգեմ:

Բայց ես պարզապես հենց նոր լսել եմ
Խոսվ սրտերի կանչն իրարու,
Ուրեմն այդպես լինում է մեկ էլ,
Երբ քեն շեն պահում սրտեր երկու:

Բարձր երգում եմ ու երազում եմ
Այն գլուխիչ երգը իմ շգրած,
Որ բոլոր, բոլոր բաժան սրտերը
Պիտի խոր սիրով կապի միմյանց:

Տանը մարդ չի եղել,
Ո՛չ ոք, ո՛չ ոք:
Առավոտից գիշեր
Վարդը ջուր է կանչել
Ծաղկամանում,
Բայց ոչ ոք չի լսել
Խզված ձայնը նրա.
Գուռը փակ է եղել,
Ո՛վ գիտի թե ինչքան:
Թվացել է վարդին,
Թե ուր որ է կգան,
Բայց չեն եկել.
«Չէ՞ որ գիտեն նրանք,
Որ ես շունեմ ոտքեր
Ու չեմ հասնի ջրին»...
Մտածել է վարդը
Ու դառնացել.
«Ես իմ թփի վրա
Ուրախ ծաղկում էի;

Ինչո՞ւ ինձ պոկեցին
Ու բերեցին ալստեղ,
Ջո՛ւր, ջո՛ւր»...
Ու մեռել է վարդը
Փակ դռան հտեղում:

ԼՈՒՌ ՍԵՐ

Վարդ ու մեխակ, թեքված իրար
Գիտեմ ի՛նչ եք ասում,
Հասկանում եմ ես բառ առ բառ
Ձեր լուռ սիրո լեզուն:

Ես ու նա էլ գլուխ-գլխի
խոսում եք անդադրում,
Կյանքն ենք քննում, աշխարհն անձիր,
Մեղ հասնելիս՝ լռում:

Բայց սիրո հուրն ինչքան պահես՝
Ծուխն է նրա վկան,
Խոսքերի մեջ՝ ինչքան խոսես՝
Վառվում է նա այնքան:

Ու խոսում ենք մենք սիրավառ,
Ինչքա՞ն քաղցր է խոսել
Մեր խոսքերում կյանք ու աշխարհ՝
Եվ... փոխադարձ մի սեր:

ՏԱՂ ՀՐԾՎԱՆՔԻ

Յրբ կողքիս ես, ես չեմ քայլում,
Ես ճախրում եմ մտվում երկնի,
Յաժ են մնում արծիվները,
Ինձ թևեր է տալիս սերր,
Ու իմ թևին թև չի հասնի:

Մտվում եմ ես խորքն աշքերիդ
Այսքան սև ու այսքան վճիտ,
Ինչպես լույս ու խավար մեկտեղ,
Քո այդ պայծառ աշիկների
Թողիչ սեին սև չի հասնի:

Միրո կենացն եմ ես խմում,
Դուք էլ խմեք, անուշ լինի,
Եվ ամենքդ ասեք ինձ պես,
Որ սիրուց եք առել թևեր
Ու ձեր թևին թև չի հասնի:

ՍԱՐՆ Ի ՎԵՐ

Գեպի վեր, սարն ի վեր
Հովհաննես Հովհաննիսյան

Մ, տխրություն, ինչպե՞ս լեռները բարձրացար...
Ես երգ պիտի գրեմ բարձունքների մասին,
Չորերն են ինձ ձգում...
Չորն ի վար շնկացող զեփյուռն իմ ականջին
Քսիսում է անվերջ բամբասանքներ,
Քե՛ս ես, իմ ընկերներ, դավաճանել եմ ձեզ,
Եվ մեկը ձեզանից, որին սիրել եմ ես
Քոլորից ավելի,
Քոլորից բարձր է ինձ հայհույում...
Ես երգ պիտի գրեմ բարձունքների մասին,
Չորն եմ իջնում սակայն:
Այսպես ձորն էր իջնում երեկ մեկը ձեզնից,
Որին սիրում եմ դեռ բոլորից ավելի
Եվ ես ասում էի՝ հաղթի՛ր, հաղթի՛ր...
Ի՞նչ հեշտ էր ուրիշին կոչել դեպի բարձունք...
Եվ հենց դրա համար ես ինձ պիտի հաղթեմ
Ու իմ երգը գրեմ բարձունքների մասին:

ՄԵՌՆՈՂ ՃԱՌԱԳԱՅԹԸ

* * *

Ես ճառագայթ եմ տերևի վրա,
Ուզում եմ լինել մի կանաչ տերև,
Շրշալ մինչ աշուն,
Բայց ճառագայթ եմ՝ ուր որ է կանցնեմ
Ու մութը կրնկնի,
Այնպես չեմ ուզում ճառագայթ լինել:

* * *

Ոչ ոք չի հիշի, որ ես եղել եմ,
Ես մարմին չունեմ, որ ինձ էլ թաղեն,
Այցի գան շիրմիս,
Եվ ես ուզում եմ մարմին ունենալ...

* * *

Դուր, բանաստեղծներ, պատմեր աշխարհին,
Թե ես ինչպես եմ աշխարհից գնում,
Ես կանաչ գույն եմ տերևին թողնում,
Ձեր կոպերի տակ՝ մի պայծառություն,
Որ շմուրվեր դուր խավարի մեջ
Ու գտներ ճամփան դեպի արշալույս:

* * *

Կգա օրը, ես քո մոտով
Կանցնեմ՝ լցված այլ կարոտով
Եվ անտարբեր քո նկատմամբ:

...Ավա՛ղ, չեկավ այդպիսի պահ,
Ես քո մոտով նորից անցա
Ինչպես աշնան մթնած մի ամպ:

* * *

Գարուն ես դու այնպես անուշ, կախարդիչ,
Ունես վարդեր ու շուշաններ սպիտակ,
Աչքերիդ մեջ առավոտներ ունես ջինջ,
Գարնան անհուն թրթռումներ՝ կրծքիդ տակ:

Գարուն ես դու, ա՛խ, ե՛ւ ամպեր ունես դու,
Ե՛վ կալծակներ, որ բաժինն են իմ հոգու:

* * *

Մանուկ էի երազուն, նստում էի ամպերին
Ու ճամփորդում, ճամփորդում ջինջ հեռուներ երկնային:

Բայց ես իջա ամպերից համբույր տալու աշխարհին,
Ա՛խ, մանկութունս մնաց այն ամպերի թևերին:

Տարան ամպերն ու տարան իմ մանկութունն իրենց հետ,
Ինձ խաբեցին ու տարան՝ աչքս թողած ճամփեքին:

* * *

Սիրելի են ծերերն էլ, գիտե՛ս,
Նրանք էլ ջաճել են եղել,
Քայց վաղուց մոխիր են սառած,
Մի՛ փորձիր կրակներ պեղել:
Նրանց պես կլինեմ ես էլ,
Իսկ հիմա, իսկ հիմա, ասա՛,
Քեզ ինչպե՛ս մոռանամ, իմ սեր,
Երբ այնպե՛ս գեղեցիկ ես դու,
Երբ այնպե՛ս ջաճել եմ ես դեռ:

ԷԼԵԳԻԱ

Ախ, իմ ընկերներ, դուք կովում ընկաք,
Իսկ ես, որ մահվան ճանկերից փախա,
Հիմա ուր որ է կհասնեմ տունս,
Կլսեմ ճոռոցն հարազատ դռան,
Հետո կբացեմ տաք անկողինս,
Քնելուց առաջ կերպեմ կես ժամ
Գալիքն իմ ոսկի և արևահամ:
Ուզեմ՝ կնստեմ ու գիրք կկարդամ,
Ուզեմ՝ կգնամ ընկերոջս այցի
Կամ ընկերացած գինու շշի հետ՝
Երկար կնստեմ իմ պատշգամբում,
Որ գինու շիթով՝ ցած հոսող կում-կում,
Կոկորդիս հասնող փղձուկը խեղդեմ:
Ձեզ, իմ ընկերներ, գուցե մոռանամ,
Քայց չէ, վերստին կեղևեք դուք իմ դեմ,
Կարմիր է գինին ձեր արյան նման:
Ես կշշնջամ և արցունքի պես
Շշուկս կընկնի կաթիլ առ կաթիլ
Մայր հողի վրա,

Ես կըշնջամ, թե ինչքան են բիւ
Երկինքն ու ծովը, որ էլ չեք տեսնում
Եվ այն աչքերը, որ սգում են դեռ
Թանկ կորուստը ձեր:
Եվ կըշնջամ, ո՛չ, կորոտամ՝
Ո՛ւր են մանկության իմ քնկերները:
Սակայն իմ ձայնը ոչ ոք չի լսի,
Լոկ աշնան քամին իր ցուրտ մատները
Իմ մազերի մեջ կխրի երկար,
Կասի՝ սթափվի՛ր...

* * *

Պորում է հին մի երգ, գնում հեռո՛ւ, հեռո՛ւ,
Շատ է թախծոտ հարկավ, որ լաց եմ լինում ես,
Թափվում է արցունքս առու-առու,
Գուցե թախծոտ էլ չէ, բայց իմ մտքերի մեջ
Աշնան անձրև է պաղ, տերևաթափ...
Ախ, կանցնի այս երգն էլ, մի օր կունենա վերջ,
Կյանքի ծառին ղեղնած մի տերև է նա էլ:
Շատ կարճ է մեր կյանքը, շատ-շատ՝ հարչուր տարի,
Մի խեղճ տերևի կյանք հավերժի անտառում,
Էլ ո՛ւր են մեզ պոկում կանաչ, կանաչ,
Մեկ է՝ կընկնենք ծառից, երբ գա տերևաթափ,
Պորում է հին մի երգ, լսողն ո՛վ է սակայն...

* * *

Դու երբեք չես եղել մեր սարերում,
Եվ չեն եղել երբեք նրանք այսբան թովիչ:
Նստում ես դու կողքիս, կանաչների վրա,
Ես հիշում եմ հանկարծ կակաչների մասին,
Ափսոս, դեռ չեն բացվել, որ քեզ համար քաղեմ...
Ու թեք լանջին պառկած մենք միասին
Կակաչներ ենք տեսնում,
Նրանք աստղաբույլեր՝ մեր շուրջը սփռված,
Յերեկը երկնքից այսպես թափվում են ցած,
Որ համբառնան նորից երեկոյան:
Կարմիր խոտուտներ կան մեր աչքերում
Եվ կա մի բոցածուփ երանություն,
Ախ, ի՞նչ գեղեցիկ է մեր սարերում:

ՍՈՆԵՏ

Տեսնես ի՞նչ են ձնծաղիկներն ասելու,
Որ դեռ ձմեռ՝ աշխարհ գալ են շտապում,
Ի՞նչ գաղտնիք կա նրանց քնքույշ թերթերում,
Որ տխրում են, երբ ճար չկա բացելու:

Լեզու առնեն՝ ի՞նչ բառերով կխոսեն,
Աչիկներն են թարթում ահա մեղմաբար,
Շուրջը նայում, մարդ են փնտրում անդադար,
Որ ի՞նչ ասեն այնպես մեղմիկ, ծաղկերեն:

Գիտեն նրանք մի մեծ գաղտնիք երևի,
Այնպիսի խոսք, որ երբ ասվի աշխարհին՝
Սիրտն ախտերից պիտի ընդմիշտ մաքրվի:

Ինչ ասում են՝ մեկ է, ոչ ոք չի լսում,
Զի հասկանում նրանց լեզուն ոչ մի սիրտ,
Գեռ ձյուն-ձմեռ՝ ո՛ւր են աշխարհ շտապում:

* * *

Ալինա Արգարյանի
պաշտոն հիշատակին

Հարավի թուխ աղջիկ, թուխծամ ու թխաչյա,
Դու քնքշություն՝ հյուսված երազներից նրբին,
Փակում եմ աչքերս, քեզ եմ տեսնում ահա,
Բարձրանում են քո դեմ սրթսրթալով ցրտից
Չյուների տակ կբաժ ծառերը հյուսիսի:
Մի վախենա, ոչ ոք չի կրակում դեմից,
Այդ կեղևն է ծառի ցրտահարված ճաթում:
Պաղ ձյունափոշին է թարթիչներիդ նստում,
Ի՞նչ գործ ունես այստեղ, դու հարավի աղջիկ,
Սովոր են ստքերդ շուշանների շաղին,
Չյունն այս տեսքով է լոկ շուշանաթուլք,
Իսկ դու շատ փխրուն ես, կմրսես ախրը դու:
Ցուրտն է կծում այստեղ, այրում ականջ ու քիթ
Մեր Հայաստան երկրի շոգի նման,
Ինչո՞ւ ես դու եկել ու քո մարմնով վախա
Պոկված տերևի պես ընկել քամու բերան:
Ախ, հա՛, այստեղ է նա՛, որ տարիներ առաջ
Քնքշորեն շոյում էր վարսերդ սևափայլ,
Պահում ափերի մեջ քո ձեռքն ինչպես սրտում:

Չես մոռացել նրան, գիտնականին քո քաջ,
Որ ուղեղում հազար Հերոդոտ ու Նարեկ
Եվ ճակատն իր վսեմ հողմ ու բբին տված
Քայլում է ձյուներով իբրև աստված:
Գնում ես դու ահա հանդիպելու նրան,
Հարավի թուխ աղջիկ, սիրտ աստվածուհի...
Եվ հպարտ է զարկում սիրտս մարդու համար:

ՄԵՐ ԼԻՃԸ

Ախ, Հովասափ քեռի, զուր մի հիշեցնի,
 Չեմ մոռացել բնավ, զգում եմ հիմա էլ
 Կոշտ մատներիդ շոյանքն իմ մազերի վրա,
 Քո քարե ուսերն եմ իմ ազդրերին զգում...
 Ինձ մի հիշեցնի, իմ հուշերի փնջում
 Վարդի պես բուրում է առավոտն այն շոյալ,
 Երբ ինձ նվիրեցիր կապո՛ւյտ, կապո՛ւյտ տետրեր,
 Տետրեր մի տողանի, տետրեր քառակուսի,
 Ու ես նայում էի հիացմունքից գինով,
 Եվ աչքերս ուրախ շաղվում էին:
 Այո՛, ձիշտ ես ասում, շինեին նրանք,
 Գուցե չէի լինի ես այն մարդը հիմա,
 Որ եկել է այստեղ երեկ երեկոյան,
 Քեզ անծանոթ ինչ-որ չափումներ է անում,
 Ուզում է այս դաշտը՝ օրոցքն իր մանկության
 Թածկել պաղ ջրերով մանկուց սիրած գետի:
 Դու առաջին մարդն ես, որ գիտես այդ մասին,

Եվ եթե հայացքդ շիներ պղտորված,
 Ինձ հետ կտեսնեիր այստեղ լիճն ապագա՝
 Ձով շուրթերը վերի արտերին հասցրած:
 Քո մտքերի մեջ էլ կյանք-համբույրից նրա
 Ուրիշ չորս գյուղերի դաշտեր կծաղկեին,
 Քո սիրտն էլ կծփար մեր լճի պես՝ խինդից,
 Եթե վեր նայեիր, ոչ թե այսպես ներքև՝
 Մեր այս մի բուռ դաշտին...
 Դու ուզում ես, որ ես ուր որ հարկն է շասե՛մ
 Իմ հղացման մասին, իմ բաղձանքի...
 Չէ՛, Հովասափ քեռի, ես երազկոտ եմ շատ,
 Մոռացե՛լ ես ինչպես դրվատում էիր ինձ,
 Որ երազկոտ եմ ես ու երազիս ճամփին
 Քար ու խութերի, դեմ ծունկի չեկող:
 Դու այն տետրերի հետ, շոյալ այն առավոտ
 Եվ այդ խոսքն ինձ տվիր, որ խոսք չէր, այլ պատգամ:
 Ի՛նչ, մոռացե՛լ եմ ձեզ...
 Դու չե՛ս լսել, գյուղում ինձ անվանում են խենթ,
 Գիտե՛ս ինչի համար, ամեն տարի, երբ ես
 Գալիս եմ գյուղ, ձեզ մոտ, բլուրն եմ բարձրանում.
 Հաշվում եմ շենքերը նորակառույց,
 Երևի խենթի պես պարում եմ հաշվելիս,
Երբ բուսնած են լինում նոր տանիքներ ձերմակ,
 Ինչպես ձերմակ սունկեր լիության անձրևից:
 Մտնում եմ տները, ամեն հեռուտացույց
 Խինդի մի դողանջ է իր երգերից փնջում,
 Ուրիշ մի մեղեդի՝ լուկ ինձ հասկանալի՝

«Այս ես եմ, ասում է, բայց երեկ չկայի»:
Նշանակում է այդ, որ մեր գյուղն է հասել,
Թեև ուշացումով՝ քսաներորդ դարը,
Մեր գյուղի վրայով արբանյակն է անցել,
Նա, որ ձգում է վեր, տալիս հոգուն թևեր,
Եվ հոգին շի ուզում ապրել առաջվա պես:
Եվ դեռ ասե՛մ, որ ես երեկ երեկոյան,
Երբ գյուղ էի մտնում ճամփի փոշին ոտքիս,
Հենց առաջին տան դուռն անհամբեր բախեցի.
— Հաց ունե՛ք, հա՛ց, — հարցրի, հերիք կանի՞, —
Նրանք ծիծաղեցին անմիտ հարցիս վրա,
Իրենց մտքում անշուշտ անվանեցին ինձ խենթ:
Իսկ ես երանի թե խենթ լինեի իրոք,
Ես մութ գիշեր էի, քամված էին իմ մեջ
Պապերիս վշտերը և տագնապը անհազ
վաղվա հացի համար,
Նաև ձեր վաղուցվա զրկանքները տեսած,
Մի կմախք էի ես՝ դալուկ ու սովահար,
Ի՛նչ հրաշքով իմ մեջ անցյալն էր արթնացել,
Ես բարձ էի տալիս խեղճ ոտքերս հաղիվ
Ու բարձ տալով աչգպես՝ պատրաստ էի մինչ լույս
Մտնել ամեն մի տուն, հարցնել՝ հաց ունե՞ք, հա՛ց...»
Եվ ես ուրացո՞ղ եմ...
Եվ ես փառասե՛ր եմ...
Ախ, սա երազ լինեք, արթնանայի հիմա
Ասածդ մտքիցս թռած լինեք...
Սպասիր, մի գնա, դեռ ինձ լսիր:

...Գնաց:

Դառն արցունքով լիքն էին աչքերը,
Գնաց, որ շտեսնեմ իրեն լալիս:
Հեշտ չէ...
Ե՛ս լինեի Հովասափ բոռու տեղ
Եվ մաքրած լինեի դաշտը խիճ ու քարից,
Անշրդի արտերը ջուր հանած լինեի
Եվ թափած լինեի հողի ամեն շերտին
Քրտինքի մի տաք շիթ, հույսի անմար մի շող
Եվ ես էլ ծլեի ամեն մի ծլի հետ
Կուզենայի՞ դարձյալ, որ մերի տեղ ծաղկեն
Այլ գյուղերի դաշտեր:
Դեռ չգիտի ոչ ոք իմ հղացման մասին,
Ուզենամ՝ կլռեմ, և չի լսի ոչ ոք:
Ո՞վ իմանա, թե երբ կմտածի մեկն էլ՝
Լիճ ստեղծել այստեղ:
Ինչ անողոք է, կյանք, այն բնազդը մարդու,
Որ իր ծառն է ջրում ուրիշ ծառերի մեջ
Եվ ինձ շնջում է՝ լռե՛լ, լռե՛լ, լռե՛լ...»

Բայց ես չլռեցի...

Ու տարիներ հետո՝

Գյուղ եմ գալիս ահա հեռուներից կրկին,
Հովն է փարվում կրծքիս ու մաղերս խառնում,
Այդ առաջին անգամ լիճն է ողջունում ինձ՝
Ճամփաս փակած իր ջինջ ալիքներով:

Մեկ էլ... Բայց աչքերիս ինչպե՞ս հավատամ ես,
Գալիս է նավակով իմ Հովասափ քեռին,
Լիճ, ալեկոծվի՛ր դու սրտիս նման:
Սահում է նավակը, մեզ տանում դեպի գյուղ,
Ծփում են ջրերը, ու նրանց պես ցուլուն
Մեր հուշերն են ծփում մի հարազատ շնչից:
Այն կապույտ կողերով փետրակներն ենք հիշում,
Կապույտ՝ այս լճի պես, և սպիտակ նաև,
Երբ ջրերն են քամուց ալեկոծվում,
Հիշում ենք արտերը ջրի տակ մնացած,
Լճի պես նրանք էլ կծփալին հիմա,
Եվ Հովասափ քեռին քանի կա աշխարհում
Իր կրծքի տակ պիտի այդ ծփանքը զգա:
Նրանց սիրուց դարձավ այստեղ ձկնորս,
Դժգոհ չէ վաստակից, ոչինչ, ապրում են լավ...
Ես երգում եմ բարձր, որոտում եմ երգով,
Ուզում գրկել լիճը, քեռուն, երկիրքը բիւ,
Ախրը հրճվանքն այն ծով, որ կյանքում լիճն այս կա,
Նո՛ր է հորդում իմ մեջ...

ՌԵԲՎԻԵՄ

I

Ողջուն քեզ, օ՛, դու իմ հայրենի տան,
Նորից բացվեցիր դու իմ հանդիման,
Ճոռացիր նորից առաջվա նման,
Երբ դեռ աշխարհում ես մանուկ էի
Եվ հեծած վրադ հա թշում էի
Մե՛կ առաջ, մե՛կ ետ:
Ո՛չ մի ճոճանակ, ո՛չ մի ձի աշխես
Չավեց հետո հաճույքն այդ անեղծ:
Դա ճոռոց չէր լսի. ես գիտեմ հիմա,
Որ չգիտակցված մի ախորդ էր դա
«Մանկութուն»՝ կոչվող մի սիմֆոնիայի:
Եվ գիտեմ նաև, որ և՛ բողոք էր
Իմ ծանրության դեմ ձայնով ճոճոտան:
Հիմա ես էլ եմ քեզ պես ճոճոտում
Իմ սրտից կախված վշտի բեռան տակ:
Դեռ մնում են, կան տառերն իմ անվան,
Որ ես քո վրա փորագրեցի,
Օ՛, այն ժամանակ ես չխորհեցի,
Որ դու ցավ կզգաս շփումից մեխի:

Իսկ հիմա, գիտե՞ս, իմ սրտի վրա
Փորագրել է մեկին իր անունը,
Քայց այնպես խորունկ, որ արյունոտվել,
Տնքում է ցավից սիրտս կարեւեր:
Տնքում է սիրտս, և ամեն անբոց
Կրկնումն է լոկ նրա անունը:
Փայտե մաշված դուռ իմ հայրենի տան,
Քայցվեցիր իմ դեմ մոր գրկի նման,
Իմ առաջ այնքան դոներ փակվեցին,
Որ դարձա կյանքում ողբ ու ուրբվիեմ:
Ահա եկել եմ ու կանգնել քո դեմ...
Քայց կուպերիս տակ, այնպես պարզ, հստակ-
Մայթերն են ձգվում հեռու քաղաքի,
Տրամվայներն են զնգոցով անցնում,
Իմ կուպերի տակ աղջիկներ, կանաչք
Նազում են՝ հագած դեկոտե շորեր,
Շուրթերին կարմիր, անբոց կրակներ,
Որոնք գնված են ինչ-որ խանութում,
Քայց բնականից պակաս չեն այրում:
Այրվում եմ ես էլ. մեկը նրանցից
Երևի ուզեց դառնամ ողջակեզ,
Կարմիր շուրթերից, էն հրդեհներից
Ժպիտի մի կայծ իմ սիրտը գցեց,
Միրտս բռնկվեց: Ու հետո, հետո...
Քայց ինչո՞ւ պատմեմ բոլորը հերթով:
Ա՛խ, ճոճոան դուռ իմ հայրենի տան,
Եկել եմ ես քեզ իմ խոցված սրտով,

Որ էլ չհիշեմ, մոռանամ նրան,
Մանկանամ նորից, ճոճվեմ քեզնից կախ:
Գե շարժվենք այսպես, բայց ես ծանր եմ, ա՛խ,
Այն թեթև տղան էլ չկա, չկա...

Ձեր գիրկը բացեք, հայրենի լեռներ,
Այստեղ դեռ շրջող լույս մանկությունս,
Այս վայրերի հետ մտերմությունս
Պետք է որ բերեն քաղցր մոռացում:
Ա՛յ, հիմա կանգնեմ այս ժեռ-քարափին,
Քեքս նորից բացուխուփ կանեմ,
Կարծվանամ կրկին,
Ինչպես մանկության ճախրող օրերին:
Քայց չեմ բարձրանում քարափի վրա,
Ախրը մեր գլուղից երևում է նա,
Մարդիկ կտեսնեն ու կծիժաղեն,
Միրուց գժվել է խեղճ տղան, կասեն:
Նորից քշվում եմ, գլորվում առաջ...
Տոթ է ու փոշի քաղաքում հիմա:
Տեսնես այս պահին ի՞նչ է անում նա,
Երևի տանն է կամ զբոսայգում,
Կամ գնացել է... նրա հետ... անտառ:
— Ինչո՞ւ տխուր ես, հարցնում է տղան,
Եվ նա սթափված ժպտում է նազով.
— Տխուր չեմ, սիրտս է մի քիչ անհանգիստ,
Մեկին մերժեցի, չլինի՞ հանկարծ

Մի փորձանք բերի իր գլխին հոգնած:
Ասա, սիրո՞ւմ ես դու ինձ նրա պես:
— Շատ խորն եմ սիրում, նրանից էլ խոր:
Բայց սուտ է ասում, հաստատ գիտեմ ես,
Որ անհնար է ինձնից խոր սիրել
Եվ մինչև հիմա գոված չլինել
Կամ արդեն մեռած:
Հաշում է մի շուն դիմացի հովտում,
Չանձրույթի՞ց արդյոք, որ գալլեր շկան,
Թե՞ սիրո կարտան այրվում է սրտում
Ու չի դիմանում խեղճ շունը դրան:
Ահա հովիվն էլ: Չսիրեց նրան
Բարալիկ աղջիկն իր հարեանի:
Երջանիկ տղա, չի սիրում ինքն էլ,
Տեսնես ինչպե՞ս է այդ կարողացել:
Ա՛խ, ինչո՞ւ իջա ես մեր լեռներից—
Լինեի այստեղ մի հովիվ ես էլ,
Ոչխարս հիմա մուշ-մուշ արածեր,
Ես ցուպիս հենված հաշիվ անեի,
Որ այսքան բուրդ եմ խուզում այս տարի,
Այսքան ցենտներ կաթ պետուժյանն հանձնում
(Վի՞շտս ում հանձնեմ, ո՞ւմ է հարկավոր):
Երբ տուն դառնայի իրիկնամուտին՝
Կսպասեր կինս իմ վերադարձին,
Կժպտար մեղմիկ ու ինձ կպարզեր
Թերթի թարմ համարն ու կասեր՝ կարգա՛:
Բայց հազիվ բացած՝ սիրտս թև կառներ,

Հրճվանքից արցունք կերևար աչքիս,
Երբ որ տեսնեի նկարս թերթում,
Շուրջս իմ հոտը, և շունս՝ կողքիս:
Հուզմունքս զսպած՝ տուն կմտնեի,
Ուր թանով ապուրն ինձ էր սպասում
Եվ ախորժակով աշխատող մարդու
Կուտեի ու փառք կտայի հացին,
Քնելուց առաջ կմտածեի,
Որ անօգուտ է մեր գետը հոսում,
Պետք է ձար գտնել լժելու նրան:
Իսկ հիմա, ավա՛ղ, այս գետի նման
Իզուր հոսում են ջահել օրերս...
Մեր լեռներում էլ դժոխքն ինձ հետ է,
Թվում էր, թե կար մի դուռ դուրս գալու,
Բայց սուտ էր այն էլ...
Օ՛, Հայնրիխ Հայնե,
Այս անդունդն ի վար կախած ոտքերս՝
Ես կարգում էի սիրո երգերդ...
Ի՞նչ իմանայի, որ կգամ նորից
Քո լացին իմը խառնելու այստեղ:
Դու այն ժամանակ ինձ ասում էիր,
Որ սիրտն էլ ունի ատամնացավն իր,
Հիմա սեփական փորձով գիտեմ այդ,
Ցավում է, ցավում սիրտս անընդհատ:
Դու, Հայնրիխ Հայնե, ցավը քո սրտում
Միշտ ծաղրում էիր, մահացու խայթում
Մուռը և թերին,

Իսկ ես չեմ ծաղրում, այդքան ուժ չունեմ,
Բայց եթե փորձեմ՝ ի՛նձ պիտի ծաղրեմ,
Որ այսպես անդոր նվում եմ ահա,
Գու ասա, Հայնե, ես ի՛նչ եմ ախրը,
Իր արարքները գիտակցող լուսնո՞ւտ,
Տերն՝ ցեխի մեջ, կամքից զուրկ սավ՛եր...
Գո՛ւ ծաղրիր ինձ, գո՛ւ,
Ավա՛ղ, ուժ չունեմ ես ինձ ծաղրելու,
Ինքս ինձ համար իմ մեջ հերքելու,
Որ կնոջ սերն է այս կյանքի հիմքը,
Միակ արևը,
Եվ մեղք չէ լինել արևածաղիկ
Ու միշտ դեպի նա թեքել պլխիկը:
Այս քանի՞ օր է խորհում եմ, թախծում,
Ո՞ւմ ինչ իմ թախիժն ու իմ խոհերը,
Այս գետի թքած փրփուրն իսկ շարժեն,
Երբ չի իմանում դրանք իմ սերը:
Եվ չնչին եմ ես փրփուրի նման,
Երբ նա չի հաշվում, որ մի բան արժեմ:
Նա ի՛նչ հեշտությամբ ինձ կհամոզեր,
Որ պետք է ապրել:
Այդպես մի նայիր, օ՛, Հայնրիխ Հայնե,
Չէ՞ որ այդ դու ես ինձ ուսուցանել,
Որ պետք է ցավող ատամը հանել:
Ներքևում գետի արծաթն է հոսում
Այնքան խոր՝ հազիվ պեծին է տալիս
Ինչպես ջրհորում:

Այս բարձրից ընկնես՝ փրկություն չկա,
Հազար կյանք լինես, մեկն էլ չի մնա,
Որ շարունակի իր ողբը անհույս:
Իմ մեջ պիտ ծաղկեր ինչ-որ վառ գարուն,
Խլրտումն էի զգում ես նրա,
Բայց սիրո արցունքն անձրև չէ, ավա՛ղ,
Հալած արճիճի ծանրությամբ իջավ,
Ջարդեց վարդերս ու թռչնեցրեց:
Մեծ պիտի լիներ իմ կյանքը զուցե,
Բայց լուկ մորմորս եղավ այսպես մեծ,
Եվ սիրտս կքեց,
Քայլս ծանրացավ՝ փղի քայլի պես...
Եկա ես այստեղ, չէ՞ որ փղերը,
Երբ որ զգում են իրենց մեռնելը
Գնում են հեռու, մի սարի ետև,
Անդունդն են ընտրում կամ խորքը ջրի,
Որ դիակն իրենց ոչ որ շտանի:
Ահա իմ անդունդն անհագուրդ ու սև...

Բայց կաց, փայտահատ,
Իմ ծառը գուցե դեռ չի շորացել,
Կսպասեմ ես դեռ, գուցե ծիլ կտա,
Կսպասեմ մեկ օր, երկու, երեք, չորս,
Եվ եթե նորից մեռնել կամենամ,
Մեռնելուց հեշտ բա՛ն,
Մի եղնգաշափ ապակի միայն
Եվ փղի շափ էլ արյուն ունենամ՝

Կես ժամ էլ շանցած՝ կաթիլ չի մնա:
Դեռ կաց, փայտահատ, կացինդ ետ տար,
Ես եկա այստեղ ասրելու՝ համար:
Եվ իմ ականջից ես ամուր բռնած,
Ինձ ետ եմ քաշում անդունդի եզրից:
Ի՛նչ լավ էր. չէ՞ որ երբ տուն հասա ես,
Մի կյանք-նամակ էր եկել նրանից.
«Չանե՛ս, գիժ, շանե՛ս, ախրը հասկացիր
Այդ բախտն էր չուզեց, որ քայլեմ կողքիդ,
Ո՛ւշ հանդիպեցիր»:
Ու կանգնեց իմ դեմ նա գորովալից,
Տեսնում եմ ահա իմ հեռու-հեռվից
Ինչպես են դողում շուրթերը նրա:
— Ինչո՞ւ հուզված ես, — հարցնում է տղան,
Բայց նա այս անգամ չի պատասխանում,
Որ մեկին մերժեց, չլինի՞ հանկարծ,
Մի փորձանք բերի իր գլխին հոգնած:
Փորձանք չեմ բերի, բայց ինչ որ եղավ
Մի՞թե փորձանք չէր իմ գլխին եկած:
Ես ո՛ւր եմ գնում՝ իմ ճամփան թեքած,
Ախ, ինչքան դորժեր թողած անկատար՝
Լոկ հառաչում եմ,
Մեկ էլ այն անում, որ մեր դռանը
Իմ անվան կողքին փորագրում եմ
Ահա նրանը:

ԱՐԵՎԵՐԳՈՒԹՅՈՒՆ

«Առավոտ լուսո, արեգակն արդար»...
Մեներգում էի ու ամբողջ գիշեր քեզ տենչում, արև՛,
Չայնակցում էին երգչախումբ-լեռներն ինձ հովով իրենց,
Ես ծանոթ չէի հովերին այս նոր,
Իմ ծանոթ հովերն այստեղից վաղուց գնացել էին,
Բայց հարազատի սրտաբացությամբ ես երգում էի
Եվ հիշում էի, որ անցյալ տարի
Երգն այս՝ մի ալիք՝ ես խառնում էի ծովի շառաչին:
Մեր տղերքն էլի ծովափ գնացին,
Բայց ես երամից շեղված մի կողունկ՝ լեռներն այս եկա
Եվ լեռների հետ քեզ սպասեցի,
Ինչպես օրերին այն լուսազվարթ իմ պատանություն:
Եվ դու ծագեցիր ահա, լուսահորդ,
Եվ ես ձեռքերս դեպի քեզ պարզած՝ աղաղակեցի.
— Ե՛կ, գրկվենք, արև...
Բայց քեզ չհասան իմ ձեռքերը կարճ,
Այդ ոչի՛նչ, արև, չէ՞ որ քո հեռվից դու հասնում ես ինձ,
Քո շող-մատները խճճում նորից իմ մազերի մեջ
Ու պատանորեն զվարթ ծիծաղում առաջվա նման:

Քանի՛ տարի է այն օրից անցել,
Բայց ինձ թվում է՝ դեռ երեկ էր այդ,
Որ տրակտորս առաջին անգամ
Պիտի շորորար հարթ դաշտից հետո այս թեք լանջերին,
Ու ես լի ահով ու քաղցր դողով սպասում էի,
Ինչպես պատանին, որ պիտի անցնի անդունդի եզրով
Նվ իբրև պարզև իր հաղթանակի
Միրած աղջկա շրթների նուրը իր սիրտը քամի:
Նս էլ, արեգակ, մի սիրահարված պատանի էի,
Դու լցվել էիր երակներիս մեջ,
Հարբեցրել ինձ արբունքի գինով:
Կինը հրաշք էր,
Կինը դու էիր ու ինձ թվում էր քե՛զ պիտի գրկեմ,
Նվ ես անհամբեր սպասում էի նրա ծագելուն,
Ինձ առավոտյան հաց պիտի բերեր՝ իր բույրը վրան,
Նսում էր արյունն իմ երակներում,
Ինչպես ետում ես դու ինքզ քո մեջ:
Օ՛, ես ունեի միլիոն աստիճան տարբություն քեզ պես,
Հապա փորձեիր շափել այն պահին բռնկումներս,
Հրճվանքս ապրելու, որ նույն ինքզ էիր
Իմ արյան մեջ էլ ուրախ ճառագած:
Նա հաց բերեց ինձ և մնաց երկար:
Քամին քանդել էր մազերը նրա,
Որ բոցեր էին ու վառում էին գեմքիս կաշեկիս:
Այդ քիչ էր կարծես՝ քամին իմ կամբը փորձելու համար
Բացեց և կուրծքը նրա սպիտակ,
Հայացքս շաղվեց ճերմակ ցոլանքից,

էլ շղիմացա,
Գրկեցի նրան ու շնչացի հարբածի խոսքեր:
Ծրեի շատ էր իմ շշուկը տաք և կամ գեղեցիկ,
Որ նա թույլ ավեց իմ բազուկները անպարկեշտ լինեն:
Բայց հետո, հետո ես համոզվեցի,
Որ ոչինչ էին իմ շշուկները տաք ու գեղեցիկ,
Նրան էլ, արև՛, սիրտ էիր ավել, մարմին՛ իմի պես,
Քեզանով լցրել, քո հրաշքներով
Ու ներսից տաք-տաք շնչում էիր խոսքեր պղտորող,
Նվ նա լսեց քեզ:
Ասես կրակ էր մարմինը նրա,
Ասես թե քեզ էր գրկեցի, արև՛, առաջին անգամ
Նվ իմ շուրթերը վառեցի երկար
Քո ստիքների ճերմակ բոցերում...
Հրաշք էր իրոք և շլրկնվեց հրաշքի պես էլ,
Նա... մեռավ, արև՛:
Չգիտեմ ինչպե՛ս ես շխենթացա,
Նվ ինչպե՛ս նորից արյունն իմ եռաց երակներիս մեջ,
Ու վարարեցիր նրանց մեջ նորից դու բերնբերան:
Բայց գուցե իրոք ես խենթանայի,
Եթե ինձ ցավը չմզեր ուրիշ, օտար մի եղբր.
Քաղաքում, թեքված գրբերի վրա,
Ես հաճախ էի մտքով այցելում մեր դաշտ ու սարին,
Նրա շիրիմն էր ինձ իրեն ձգում կարոտի նման,
Սեղանիս դրված մի պատառ հացը ճեղքվում էր իմ դեմ,
Ու տեսնում էի ես ճեղքի միջից իմ տրակտորը,
Ուրիշն էր նստած ղեկի մոտ նրա,

Ուրիշն էր հողից քամում հողաբույր ու սպիտակ հաց,
Ուղարկում քաղաք, բուրբին և ինձ:
Ես տեսնում էի ոչխարի հոտեր,
Երբ նայում էի շորերիս բրդե,
Ծաղիկներ էի տեսնում և խոտեր իմ հայացքի դեմ:
Որ կովի կրծում կաթ էին դառնում և ազդրերին՝ միս:
Այդ ժամանակ էր, որ հին հույները ինձ շնջացին,
Որ որդին եմ քո, ո՞վ կրակ անմար,
Եվ որդին հողի, օդի և ջրի,
Հողը առանց քեզ և առանց ջրի և առանց օդի
Ինձ բույսեր չի տա և ես չեմ ապրի:
Գուր եք ծնել ինձ ու դուք-եք սնում,
Առանց քեզ մթնում ես կխարխափեմ՝ նաև հոգով կույր,
Եվ առանց հողի ես չեմ ունենա կյանքում հենարան
Եվ առանց ջրի կխեղդվեմ տապից,
Եվ առանց օդի կզառնամ հատնող ինչ-որ բազմակետ:
Ես որդին եմ ձեր, ապրում եմ ձեզնով,
Իսկ նա... չի՛ ապրում:
Վաղ գնաց կյանքից՝ խինդն իմացության դեռ չճաշակած:
Նա մի աղջիկ էր կապույտ աչքերով,
Թեև չգիտեր, որ երազն ունի գույնն իր աչքերի,
Բայց այնքան, այնքան երազներ ուներ:
Ուներ սև մազեր, որ սև բոցի պես այրել գիտեին,
Մի սրնգաթով, դուլալ ձայն ուներ.
Որ թափանցում էր սրտի խորքերը, մնում ծալքերում:
Գուցե դեռ պիտի այդ ձայնն աշխարհի բեմերից հնչեր,
Սակայն առայժմ նա սովորում էր կովն ինչպես կթել

Ու... չսովորեց:

Նա մահից առաջ նայեց քեզ երկար,
Գու նրա աչքից կաթեցիր ինչպես ցլուն մի արցունք
Ու վերջին անգամ խճեց նա քեզ թարթիչներին մեջ.
— Ա՛խ, ի՛նչ արև է, բայց ես հողի տակ չեմ տեսնի նրան...
Գու՛ եղար, արև՛, նրա կարտոր ամենավերջին
Ու ինձ թվում է, թե նա չմեռավ, այլ քեզ միացավ,
Իր սիրո պայծառ շողերն է նորից իմ շուրջը փռում,
Աշխարհի վրա, ո՞ղջ տիեզերքում:
Եվ սիրելի ես դու ինձ կրկնակի:
Նայում եմ ես քեզ, խորհում եմ՝ ինքս էլ չգիտեմ ինչու,
Որ դո՛հ չեմ գնա ոչ մի փորձանքի,
Ոչ էլ գնդակից կրնկնեմ կովի մեջ,
Այլ այսպես քիչ-քիչ ես կծերանամ՝
Միշտ մտածելով, որ դուրս ես գալիս իմ միջից քիչ-քիչ:
Իմ կյանքը դու ես և այս տերևի կյանքն ես բովանդակ,
Որ սոսափում է այս ծառի վրա խինդն իր գոյության,
Գու նրա մեջ էլ շռայլորեն կաս ու կանաչ է նա,
Սակայն երբ դուրս գաս՝ աշուն կլինի,
Նա դեղնած կրնկնի այս ծառից ներքե:
Այդպես կրնկնեմ ես...
Ուզում եմ զվարթ ասել, թե՛ ոչի՛նչ,
Հող էի և հող կզառնամ նորից,
Բայց իմ շուրթերից «ավա՛ղն» է պոկվում,
Ավաղում եմ ես, որ էլ չեմ տեսնի քո ճառագեղը,
Չեմ զգա ու չեմ շոշափի մաշկով քո ճառագայթը,
Չեմ զգա էլ քեզ իմ էության մեջ:

Ու քեզնով լցված օրհներգում եմ քեզ
 Ես՝ հին դարերի կրակապաշտս,
 Երեկվա հողս, երեկվա ջուրս, օդս երեկվա,
 Օրհներգում եմ քեզ, որ ինձ հանել ես անհայտությունից,
 Ինչպես ծիլերը՝ հողի ընդերքից,
 Եվ ես լսում եմ մոտեցող սիրո ոտնաձայները,
 Թեքված իմաստուն գրքերի վրա՝
 Ինձ եմ վերձանում,
 Աչքերս սուղած այլ աչքերի մեջ՝
 Իմ ներսն եմ նայում:
 Օրհներգում եմ քեզ, որ դու այնպես ես խորքերն իմ լցված,
 Որ ինձ թվում է, ուր սր է ինձնից շողեր կկաթեն:
 Կա՛ս իմ արյան մեջ, երգում ես կարմիր, կարմիր մի
ցայգերդ
 Եվ բիբերիս մեջ երգում ես, արև՝
 Երբ որ նայում են նրանք աշխարհին,
 Երգում ես նաև իմ ոտքերի մեջ,
 Երբ որ ինձ նրանք երազիս անհաս կատարն են տանում:
 Օրհներգում եմ քեզ և նրա համար,
 Որ ինձ օժտել ես մի թանկ հատկությունմբ,
 Մարդ ես ծնել ինձ,
 Որ այս ամենը հասկանամ, զգամ
 Եվ իմ ցնծությունմբ ողջ տիեզերքը լցնեմ տակետակ,
 Կանչեմ ու գոչեմ՝ ես որդին եմ քո,
 Գլխիս մի՛շտ փայլիր...

ԲՈՎԱՆԳՍԿՈՒԹՅՈՒՆ

Քանասեղծություններ

Քայլում՝ ցնծում եմ	3
Տանը մարդ չի եղել	5
Լուս սեր	7
Տաղ հրճվանքի	8
Սարն ի վեր	9
Մեծնող ճառագայթը	10
Կգա օրը	11
Գարուն ես դու	12
Մանուկ էի երազուն	13
Սիրել են ձերերն էլ	14
Էլիզիա	15
Ծորում է հին մի երգ	17
Դու երբեք չես եղել	18
Սոնետ	19
Հարավի թուփ աղջիկ...	20

Պատմեր

Մեր լիճը	22
Ինքվիեմ	27
Արևերգություն	35

Վարդանյան Վաչագան Լևոնի
ՅՍՅԳԵՐԳ

Խմբագիր՝ Ա. Հ. Ումառյան
Նկարիչ՝ Լ. Ռ. Բերբերյան
Գեղ. խմբագիր՝ Ան. Վ. Գասպարյան
Տեխ. խմբագիր՝ Ե. Ա. Ախիրյան
Վերատպող սրբագրիչ՝ Հ. Հ. Ղազարյան

Հանձնված է արտադրության 3/8—1967 թ.:

Ստորագրված է տպագրության 30/X—1967 թ.:

Տիրաժ 3000: Պատվեր 1165, ՎՖ 07089: Թուղթ տպագրական
№ 2, 70×108¹/₃₂, տպ. 1,37 մամ.—1,88 պամ. մամ.

Հրատ. 1,1 մամ.: Գինը՝ 11 կոպ.:

«Հայաստան» Հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91.

ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր մամուլի կոմիտեի
պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության № 1
տպարան, Երևան, Ալավերդյան փող. № 65: